



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 010

« 05 » Հունիսի 2014թ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Ի պատասխան Գավառի Օրհուս կենտրոնի 15.05.2014թ.-ի թիվ AA-009 գրությանը, ՀՀ Բնապահպանության նախարարությունից 30.05.14թ.-ին թիվ 5/12.1/51430 գրությամբ պատասխան է ստացվել, ըստ որի 2013թ.-ին «Հիդրո կորպորացիա» ՍՊԸ «Արգիճի» ՓԶԷԿ-ում իրականացվել են տեսչական ստուգումներ: Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն իրականացված տեսչական ստուգումների արդյունքների վերաբերյալ /տրամադրել համապատասխան փաստաթղթերի բոլոր պատճենները/:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան